ՀՏԴ 82.09(430.2) Արտասահմանյան գրականություն

ՎԻԼՀԵԼՄ ՄԱՅՍՏԵՐԻ ԿԵՐՊԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Միրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Գյոթե, Վիլհելմ Մայստեր, գաղափարներ, ողբերգական կերպար, թատրոն, զարգացում, «Գրոհ եւ փոթորիկ», անձի ձեւավորում, գրական նշանակություն, գրականագետ:*

Ключевые слова: *Гете, Вильгельм Майстер, идеи, трагический образ, театр, развитие, "Буря и натиск", формирование личности, литературное значение, литературовед.*

Keywords: *Goethe, Wilhelm Meister, ideas, tragic character, theater, development, "Storm and Onset", forming of personality, literary value, literary critic.*

С. Степанян

Развитие образа Вильгельма Майстера и преодоление трагедии

Цель данной статьи - исследовать путь развития образа Вильгельма Майстра в произведении Гете "Буря и натиск". В статье рассматриваются основные условия трансформации образа. Исследование показало, что в течении долгих лет образ Вильгельма подвергается разным внутренним и внешним изменениям. Идеологические и общественные столкновения привели его к гибели. Однако под воздействием искусства Вильгельму удается преодолеть трагедию. Через образ Вильгельма Гете подчеркивает важность искусства и практической активности общества в деле воспитания поколения.

S. Stepanyan

Development of Wilhelm Meisters' Image and Overcoming Tragedy.

This article explores the development of William Meister's image in "Storm and Onset" by Goethe. The research considers the main circumstances of the character's transformation. The investigation has shown that during the years Wiliam's character is subjected to various external and internal changes. Ideological and social clashes bring him to ruin. Under the influence of arts Wilhelm manages to overcome the tragedy. Goethe highlights the importance of art and practical activity of socilty in the quesion of upbringing of generation.

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Վիլհելմ Մայստերի կերպարի զարգացման ուղին: Հոդվածում քննության են առնվում կերպարի վերաձեւավորման պայմանները: Ուսումնասիրությունը ցույց է տվել. Վիլհելմի կերպարը տարիների ընթացքում ենթարկվել է ներքին եւ արտաքին փոփոխությունների: Գաղափարական, հասարակական բախումները նրան հասցնում են կործանման: Միայն արվեստի ներգործմամբ Վիլհելմը հաղթահարում է ողբերգությունը: Վիլհելմի միջոցով Գյոթեն կարեւորում է սերունդի դաստիարակման գործում արվեստի դերը եւ հասարակության գործնական ակտիվությունը:

Իր ողջ գործունեության ընթացքում Գյոթեն լրացրել ու զարգացրել է այն բոլոր գաղափարները, որոնք առաջնորդել ու պարտադրել են իրեն նոր կերպարներ վերակերտել: Սրանով են պայմանավորված Գյոթեին բնորոշ որոշ առանձնահատկություններ: Առաջին՝ Գյոթեն սիրում էր իր կերպարներին թողնել անավարտ: Երկրորդ՝ նա կարողանում էր կերպարի բովանդակության մեջ գաղտնագրել այնպիսի հիմքեր, որոնց հիման վրա հետագայում աներ լրացումներ ու վերափոխումներ: Ինտուիտիվ արտահայտվող այս հատկությունները թույլ են տալիս պնդելու, որ Գյոթեն ուներ մտքի հեռատեսություն: Այս մասին է փաստում կապիտալիստական ինդուստրացման այն մեծ վտանգը, որ Գյոթեն զգում էր մարդկության վրա կախված:

Գյոթեի ստեղծագործությունների համապատկերում նույն սկզբունքով է կերտվել Վիլհելմ Մայստերի կերպարը: Այն հանդիսանում է անձի ձեւավորման լավագույն օրինակ: Թեեւ այս կերպարը քննվում է Գյոթեի գրական գործունեության երկրորդ շրջանում, բայց գրաքննադատությունը դրա ստեղծման մասին վկայում է Գյոթեի առաջին գործերի շարքում: 1910թ. Ցյուրիխի գիմնազիայի ուսուցիչ Գուստավ Բիլեթերը կատարում է դարի լավագույն գրական բացահայտումներից մեկը: Նրա աշակերտը բերում է դեղնած ձեռագրերի մի կապոց, որ գտել էր ծնողների տանը: Ուսումնասիրելով, Բիլեթերը պարզում է, որ դրանք Գյոթեի «Վիլհելմ Մայստերի ուսումնառության տարիները» անավարտ վեպի առաջին օրինակն է: 1911թ. լույս է տեսնում այս վեպը «Վիլհելմ Մայստերի թատերական

շնորհը» վերնագրով: Ռուս գրականագետ Անիկստը մանրամասն ներկայացնում է ձեռագրի պատահական պահպանման պատմությունը եւ այն համարում անցումային ստեղծագործություն. *«Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես անցումային ստեղծագործություն: Դրանում կան ոչ միայն «Գրոհ եւ փոթորկի», այլ նույնիսկ դրան նախորդող լուսավորության տարրեր»* (1):

Վիլհելմ Մայստերի կերպարի վրա Գյոթեն աշխատել է տարիներ շարունակ, ինչպես «Ֆաուստ»-ի վրա: Այն սկսել է 1777թ., քսանութ տարեկանում եւ ավարտել 1829թ, մահից երեք տարի առաջ: Հերոսի ազգանվան ընտրությունը պատահական չէ: Մայստեր բառը գերմաներենից հայերեն թարգմանությամբ նշանակում է վարպետ, արարիչ: Այս միտումը Գյոթեի ստեղծագործությունում ունի առանցքային նշանակություն: Վիլհելմ անունը գրականագետները կապում են Վիլհելմ Շեքսպիր անվան հետ, ընդունելով այն մեծագույն հարգանքի արտահայտման ձեւ: Բացի դրանից XVIII դարում Գերմանիայում մայստեր անվանում էին երկար ուղի անցած ու մեծ փորձ ունեցող արհեստավորին: Կերպարի վրա Գյոթեի ամբողջ աշխատանքը կազմում է երեք գիրք: Թեեւ դրանք անդրադառնում են նույն կերպարին, բայց էապես հանդիսանում են կերպարի զարգացման փուլեր: Տարբեր ժամանակներում վեպը տարբեր է գնահատվել: Գերմանացի փիլիսոփա, գրականագետ, գրող Ֆ. Շլեգելը(1772-1829) նշում է, որ վեպում երեւան են գալիս բարձրակարգ տենդենցներ. «*Ֆրանսիական հեղափոխությունը, Ֆիխտեի գիտական տեսությունը եւ Գյոթեի «Մայստերը» մեր ժամանակների մեծագույն տենդենցներն են*» (2): 2013թվականի տվյալներով վեպի մասին լույս են տեսել մոտ 1651 աշխատանքներ, որոնցից շատերը շարունակում են մնալ ակտուալ քննարկումների թեմա:

Առաջին գիրքը (Վիլհելմ Մայստերի թատերական շնորհը) Գյոթեն գրել է 1777-1785թթ.: Վեպը սկսվում է Վիլհելմի մանկությունից: Մանուկ Վիլհելմի հոգում խաղալիք թատրոնը մեծ սեր ու ձգտում է առաջացնում դեպի արվեստը: Ու հենց այս հասակում նա ունենում է առաջին բախումը՝ ստիպված լինելով հորից թաքցնել իր ցանկությունները: Առեւտրական հոր դաստիարակչական պատկերացումները կապված էին որդու հասարակական դիրքի հետ: Հայրը որդու մեջ տեսնում էր ապագա առեւտրականին: Ի տարբերություն հորը, մայրը հավանություն էր տալիս որդու գեղագիտական հակումներին: Ներկա լինելով ծնողների մշտական վեճերին, Վիլհելմը միշտ կրել է նրանց ազդեցությունները: Հոր կողմից ստացած բոլոր ֆինանսական միջոցներով իրագործել է նրա պահանջները եւ միաժամանակ դրանք գաղտնի օգտագործել սեփական հետաքրքրությունների համար: Այդ մասին արդի գերմանացի գրականագետ Հե Յու-Կիմը գրում է. « *Նա հորից ստանում է փողերը, նրանից թաքցնում է իր թատրոնի գոյությունը, իսկ նրան ուղարկում, օրինակ, ճանապարհորդական կեղծ տեղեկություններ…*» (3): Հաջորդ հարվածը նրան հասցնում է գեղեցիկ դերասանուհի Մարիաննան, որի հետ Վիլհելմը հույս ուներ իրականացնել իր երազանքները: Փորձառու գեղեցկուհին առանց սիրեկանի հետ կապերը խզելու հանդիպում է Վիլհելմի հետ: Վիլհելմը ծանր է տանում վիրավորանքը: Հիասթափությունը հասցնում է նրան հիվանդության: Այստեղ Վիլհելմն իր ընկճվածությամբ նմանվում է Վերթերին: Եվ Վիլհելմը եւ Վերթերը ապրում են սիրո դրամա: Բայց ի տարբերություն Վերթերի, որին բնության գեղեցկությունն ու զգացմունքի խորությունը զրկել են գործելու ընդունակությունից, Վիլհելմը կարողանում է գեղարվեստական ընթերցանությամբ ազատվել ծանր մտքերից: Քրոջ ամուսնու եւ ընկերոջ՝ Վերնների ջանքերով Վիլհելմը վերադառնում է կյանք, սկսում է պիեսներ ընթերցել: Նա երազում է հիմնել ազգային թատրոն, եւ դրան հասնելու համար մեծ փորձ է կուտակում մանկական-տիկնիկային, շրջիկ թատերական խմբերում: Գյոթեն հերոսին քաջալերում է իր պատանեկան ստեղծագործություններով: Վիլհելմի միջոցով Գյոթեն արտահայտել է սեփական մտահոգությունները ազգային գրականության եւ թատրոնի վերաբերյալ: Այս առումով նա կատարել է կենսագրական անցքերի մի շարք զուգահեռներ: Վաղ շրջանում թատրոնի հանդեպ ունեցած սերն ու հետաքրքրությունը, դրամատիկական ստեղծագործության առաջին փորձերը Գյոթեն ընդհանրացրել է Վիլհելմ Մայստերի կերպարում: Տատիկից նվեր ստացած տիկնիկային թատրոնը Վիլհելմի մեջ առհավետ բեմական արվեստի հանդեպ ներշնչել է մեծ սեր: Այս միջադեպը հիմնված է Գյոթեի մանկական հիշողությունների վրա: Սակայն ի տարբերություն Գյոթեի, որի մոտ տիկնիկային թատրոնը եղել է հաճելի զբաղմունք, Վիլհելմը դրա մեջ տեսել է ընտանիքի սառն ու անտարբեր մթնոլորտը: Գյոթեի նման Վիլհելմը ներկայանում էր հայրենի քաղաք ժամանած բոլոր թատերական խմբերի ներկայացումներին: Գյոթեի նման Վիլհելմը իր հաջողությունները փորձում է տարբեր բնագավառներում:

Գյոթեի գեղարվեստական հնարքներից մեկը համարվում է մեծագույն մարդկանց հանդեպ ունեցած իր վերաբերմունքն ու սերը կերպարի մեջ մարմնավորելը: Դա առանձնապես վերաբերում է Շեքսպիրին, որի պաշտամունքը Գյոթեն տարածում է Վիլհելմի գործողությունների մեջ: «Համլետ»-ը դառնում է Վիլհելմի համար կյանքի դաս: Գյոթեն բազմիցս անդրադարձել է այս ողբերգությանը:

Առաջին գրքում բախումը տեղի է ունենում բուրժուական կարգերի եւ Վիլհելմի՝ արվեստին, առանձնապես թատրոնին նվիրվելու ձգտումի միջեւ: Վիլհելմը հանդես է գալիս որպես «Գրոհ եւ փոթորիկ» շարժման ներկայացուցիչ, կլասիցիզմի դեմ պայքարում նա ձգտում է ստեղծել ազգային ինքնուրույն գրականություն:

Հաջորդ՝ «Վիլհելմ Մայստերի ուսման տարիները» գրքում, 1796թ. Վիլհելմը կորցնում է «Գրոհ եւ փոթորիկ» շարժման գծերը եւ դառնում բյուրգերական շրջապատի ներկայացուցիչ: Նախկին Վիլհելմից այստեղ առկա էր միայն թատրոնի հանդեպ ունեցած սերը: Նոր Վիլհելմը կտրում է երկար ճանապարհ: Այդ ընթացքում ձեւավորվում է նրա անձը: Շատ քննադատներ վեպը համարում են Վիլհելմի հոգեւոր զարգացման պատմությունը: Այս առումով գրականագիտության մեջ երկը ճանաչվում է որպես դաստիարակչական վեպ:Այն ողջունել են Շիլլերը, Կերները, Վիլհելմ Հումբոլդը: Շիլլերը նույնիսկ ընթերցել է ձեռագիրը, իր հիացմունքը բազմիցս հայտնել հեղինակին: Վեպի ավարտի մասին նա գրել է. «*Եթե ես պետք է կարճ արտահայտեմ այն նպատակը, որին հասել է Վիլհելմը երկար մոլորություններից հետո, ապա ես կասեի. «նա անցնում է անբովանդակ ու անորոշ իդեալից պարզ ու գործնական կյանքի, բայց այնպես, որ իդեալականացման ուժը վնաս չի կրում*»» (4): Ի տարբերություն Վերթերի եւ Տասսոյի, որոնք գեղարվեստական հարուստ բովանդակությամբ իրականության մեջ գործելու անընդունակ կերպարներ են, Վիլհելմն ունի Ֆաուստի ձգտումները: Այս վեպում Գյոթեն իր հումանիստական հայացքները տարածում է նաեւ հասարակ մարդկանց վրա: Ինքնաճանաչման համար նա կարեւորում է անհատի կրթությունը, ինչը ոչ բոլոր գերմանացիներն էին ստանում. «*Ես չգիտեմ, թե դա ինչպես է օտար երկրներում, բայց Գերմանիայում միայն ազնվականը կարող է կրթություն ստանալ*» (5): Վիլհելմը հրաժարվում է ընկերոջ շահավետ առաջարկից, նպատակ ունենալով հետեւել իր ես-ին, ազատել իրեն բյուրգերական կաղապարից: Եթե Վերթերը հաշտության եզրեր է որոնում սոցիալապես իրենից բարձր շրջապատի հետ, ապա Վիլհելմը հրաժարվում է բյուրգերական բարեկեցությունից եւ ձգտում դեպի անդասակարգ բոհեմին: Թատրոնը դառնում է նրա կյանքի մի աստիճանը: Եվ Վիլհելմը պետք է ներգործի մարդկանց գիտակցության մեջ թատրոնի դերի բարձրացմանը: Ի վերջո թատրոնը պետք է դառնա ազգի ոգի: Սրանով Գյոթեն ակնարկում է քաղաքականացված մշակույթի մասին, ինչն այսօր Գերմանիայի պատմական զարգացման ուղիներից մեկն է:

Վիլհելմ Մայստերը երրորդ վեպում հանդես է գալիս միայն անվանական առումով: «Վիլհելմ Մայստերի թափառումների տարիները» գիրքը լույս է տեսել ռոմանտիզմի զարգացման տարիներին: Այն ներառում է առանձին պատմվածքներ, որոնց հերոսները ծառայում են արվեստին, փորձելով գտնել իրենք իրենց: Այդ նպատակին Գյոթեն ծառայեցնում է երկար ճանապարհորդությունները: Սրանով պայմանավորված Գյոթեի այս երկը կոչվեց նաեւ ճանապարհորդական վեպ: Ժամանակ առ ժամանակ ընտրության առաջ կանգնելով, Վիլհելմն ընկնում է երկմտանքի մեջ: Բեմի եւ գործարարության միջեւ նա ընտրում է վերջինը: Այստեղ Գյոթեն Վիլհելմի միջոցով իրականացնում է իր նպատակը: Վիլհելմը հայտնաբերում է, որ իրեն հետեւում են: Այս հետապնդումը իրականացնում է այսպես կոչված «Աշտարակ» միությունը, որն իր շուրջն է հավաքում հոգուտ մարդկության նվիրյալներին: Վիլհելմի անդամագրումը գրականագետները համարում են նրա աշակերտության ավարտը եւ մարդկությանը ծառայելու առաքելության սկիզբը: Վիլհելմը դառնում է բժիշկ, եւ ի վերջո իր բոլոր որոնումների պատասխանը գտնում երկրային կյանքի վրա: Վեպի գրքերի մասին հայ գրականագետ Ս. Սողոմոնյանը տվել է տարբեր գնահատականներ. *««Վիլհելմ Մայստեր» վեպի առաջին հատորի («Վիլհելմ Մայստերի ուսման տարիները») ստեղծագործական օրենքը ռեալիզմն է: Առարկան ժամանակակից գերմանական քաղքենիական աշխարհն է: <>Ի դեպ ասած, վեպի երկրորդ մասը՝ «Վիլհելմ Մայստերի թափառական տարիները» (1829), եւ «Արեւմտա-արեւելյան դիվան» (1814-1827) բանաստեղծական գործերի մեծածավալ ժողովածուն, կտավի լայնությամբ, ընդհանրացումների ուժով եւ առաջադրած խնդիրներով շատ մոտ են «Ֆաուստ»-ին» (6):*

Վիլհելմը կարողանում է հաղթահարել նաեւ սիրո խնդիրը: Վեպի կերպարային համակարգում մեծ տեղ ունեն կանայք: Մարիաննայի հանդեպ ունեցած հիասթափությունից հետո Վիլհելմը ունենում է շատ սիրային կապեր: Մարիաննային հետեւում են Ֆիլինան, Ավրելեյը, Թերեզան, Մինոնը եւ այլք, բայց բոլոր շփումներում Վիլհելմը չի գտնում իր իդեալը: Ի վերջո նա հանդիպում է ամազոնուհի Նատալիային, որի հետ եւ ամուսնանում է: Այս բոլոր կանանց տառապանքի մեջ Գյոթեն ողբերգական է համարում Մինոնի կերպարը: Գյոթեն նրան կերտել է որպես բանաստեղծական կերպար: Վաղ հասակում իրեն բաժին հասած դառնություններից ու տառապանքներից Մինոնը դարձել էր չափազանց խորհրդավոր, ինքնամփոփ ու լռակյաց: Վիլհելմը փրկում է նրան: Աղջկա երախտագիտությունը աստիճանաբար վեր է ածվում ընկերության, ապա՝ սիրո: Ու նա ստիպված է լինում գաղտնի տառապել: Նրա զգացմունքները արտահատվում են միայն պոեզիայի մեջ: Այս ներքին պայքարը իմաստավորվում է, եւ դրանից ընդգծվում կերպարի ողբերգականությունը: Վիլհելմի կերպարում Գյոթեն արտահայտել է նաեւ իր սիրո առեղծվածը: Նա ոգեշնչվել է իրեն հանդիպած կանանցով, նրանց հետ կապված բոլոր տառապանքները հաղթահարել գեղարվեստական խոսքում, իսկ թե ում է սիրել իրականում Գյոթեն, հայտնի չէ:

Այսպիսով՝ Վիլհելմը կրթության,ուսման միջոցով արտահայտում է մարդու կատարելագործման գաղափարը: Վերջին գրքում Վիլհելմն ունի Ֆաուստի ռեալիստական միտումները, առանց որի արվեստը չի կարող գոյատեւել:

Գրականություն

1.Аникст, Творческий Путь Гете, Москва: Худож. лит., 1986. էջ 214:

2. Шлегель Ф. Эстетика. Философия. Критика, т. 1, М., 1983, էջ 300.

3.Kim Hee-Ju, RituelleIdentitätsbildung. Zur Lossprechung Wilhelm Meisters, Goethe-Jahrbuch, Weimar, 2002, էջ 45.

4. Шиллер Ф. Собр. Соч.,т.7, էջ 416:

5. Goethe, Johann Wolfgang:

Wilhelm Meisters Lehrjahre.Ein Roman In: Goethe, Johann Wolfgang: SämtlicheWerke nach Epochen seines Schaffens. Band 5: Herausgegeben von Hans-Jürgen Schings.München –Wien 1988, էջ 288:

6. Սողոմոնյան Ս. Լեսսինգ Գյոթե Հայնե, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, էջ 301-302:

Տեղեկություններ հեղինակի մասին

Սիրվարդ Ստեփանյան – ԱրՊՀ գերմաներեն եւ ֆրանսերեն լեզուների ամբիոն
E-mail: sirasuhi@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: